

Չարց Ու՞մ կողմից է առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը կատարում:

Պատասխան Առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են մատակարարի կողմից, այդ թվում՝ սպառողի գրավոր դիմումի հիման վրա, բացառությամբ եթե սպառողը, իրար հաջորդող երկու տարիների ընթացքում մատակարարին երկրորդ անգամ առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում, պարտավոր է վճարել մատակարարին կանխավճար՝

ա) միաֆազ հաշվիչների համար՝ 750 դրամ,

բ) եռաֆազ հաշվիչների համար՝ 1500 դրամ:

Եթե ստուգման արդյունքներով արձանագրվում է առևտրային հաշվառքի սարքերի խախտում, ապա մատակարարը կանխավճարը հաշվի է առնում սպառողին ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման հաշվում: Առևտրային հաշվառքի սարքերի ճշգրիտ աշխատանքի դեպքում կանխավճարը դիտարկվում է որպես առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման համար մատակարարին վճարված ծառայության վճար և սպառողին չի վերադարձվում: